ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Վերապատրաստող կազմակերպություն `

ՀՀ Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան

Հետազոտական աշխատանք

Առարկա՝ Կենսաբանություն

Թեմա՝ 'Էկոլոգիական կրթության և դաստիարակության կազմակերպումը միջին դպրոցում՝ կենսաբանության ուսուցման գործընթացում'

ՈՒսումնական հաստատություն՝ Ողջիի Ղ. Առուստամյանի անվան միջնակարգ դպրոց

Հետազոտող ուսուցիչ՝ Անահիտ Ավետիսյան

Աշխատանքի ղեկավար՝ կ.գ.թ. , դոցենտ Նելլի Ադամյան

Գյումրի 2022

Բովանդակություն

Ներածություն……3

Գրական ակնարկ

Գլուխ 1. Էկոլոգիական հասկացությունները որպես էկոլոգիական գիտակցության և կուլտուրայի ձևավորման միջոց……5

Գլուխ 2. Էկոլոգիական կրթությունն ու զարգացումը դպրոցում……7

Հետազոտության ընթացք

2.1. Էկոլոգիական դաստիարակության առանձնահատկությունները միջին դասարաններում՝ կենսաբանության ուսուցման գործընթացում:……9

2,2, Էկոլոգիական կրթության և դաստիարակության կազմակերպումը……. 9

Եզրակացություն……15

Գրականության ցանկ……16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բնությունն ամեն ինչի մասին հոգ է տարել,

մեզ մնում է միայն սովորել բնությունից

Լեոնարդո դա Վինչի

Արդի ժամանակներում տեղի է ունենում հասարակական արժեքների և գերակայությունների այնպիսի փոփոխություն, որն ուսումնական գործընթացի մշտական կատարելագործում է պահանջում: Ժամանակակից կրթական բարեփոխումներն ուղղված են այնպիսի մանկավարժության ստեղծմանը, երբ շեշտը դրվում է ոչ թե աշակերտի կողմից պատրաստի գիտելիք վերցնելու և մտապահելու, այլ նրանց բացահայտման և պարզաբանման վրա, աշակերտի՝ ինֆորմացիայի ինքնուրույն մշակելու կարողությունների զարգացմանը ,կրթության բովանդակության, աշակերտների պրակտիկ կյանքի ստեղծմանը, որը կենտրոնացված է քննադատական մտածողության և կառուցողական մանկավարժության մեջ:

Մարդկանց գործունեության արդյունքները մեծ մասամբ որոշվում են մշակույթի այնպիսի յուրահատուկ բաղադրիչներով, ինչպիսիք են բարոյականությունը և էկոլոգիական գրագիտությունը:

Էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունը որպես մանկավարժական գործընթաց և հասարակության կայուն զարգացման անհրաժեշտություն՝ հիմնահարցերը քննարկել բոլոր առարկաների դասաժամերին՝ ապահովելով սովորողների գիտակցված մասնակցությունը բնապահպանությանը:

Հետազոտության նպատակն է սեփական աշխատանքային փորձի ընդհանրացման և հետազոտության թեմայի հետ առնչվող գիտական, մանկավաարժահոգեբանական, փիլիսոփայական և գիտամեթոդական գրականության ուսումնասիրման և վերլուծության հիման վրա *մշակել* համակարգ, որը թույլ կտա արդյունավետ և անընդհատ էկոլոգիական կրթություն *ապահովել* կենսաբանության ուսուցման գործընթացում, սովորողներին *զինել* անհրաժեշտ գիտելիքներով, *զարգացնել* պատասխանատու վերաբերմունք շրջակա միջավայրի նկատմամբ, *ձևավորել* վայրի բնության հետ խելամիտ փոխհարաբերություն և մարդու ստեղծարար աշխատանքի և մտավոր ստեղծագործության կարողություններ, ինչպես նաև էկոլոգիական մշակույթ, արժեքային դիրքորոշում

Հետազոտության խնդիրներն են

- *Ուսումնասիրել* թեմայի հետ առնչվող գիտամեթոդական գրականություն
- Կրթության չափորոշչին և ծրագրին համապատասխան *առանձնացնել* էկոլոգիական ուղղվածության թեմաները և,ելնելով պահանջներից, *իրականացնել* դրանց կենսաբանաէկոլոգիական մշակումը
- *Մշակել* էկոլոգիական հասկացություններին ծանոթանալու գիտականորեն հիմնավորված մեթոդիկա
- *Մշակել* և *գործարկել*՝ էկոլոգիական ուղղվածությամբ ցուցադրական փորձերի և գործնական աշխատանքների համակարգ
- *Մշակել* միջառարկայական կապերի արդյունավետ օգտագործման համակարգ՝ ֆիզիկա, քիմիա,աշխարհագրություն,գրականություն և այլն
- *Նպաստել* միջոցառումների, էքսկուրսիաների կազմակերպմանը
- *Գտնել* համակարգի բնապահպանական խնդիրները և առաջադրել արդի լուծման ճանապարհներ
- *Կարողանալ* խելացի վերլուծել բնապահպանական իրավիճակները
- *Վերաբերվել* բնությանը որպես համամարդկային արժեք
- *Ձևավորել* կենդանի բնության նկատմամբ ապրումակցում,հանդուրժողականություն և հարգանք
- *Անցկացնել* քննարկման ակումբի հանդիպումներ՝ ներգրավելով կրտսեր դպրոցի աշկերտներին:

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ԳԼՈՒԽ 1. ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑ

Էկոլոգիական գիտակցության և գիտելիքների ձևավորման գործընթացի հիմքը

Էկոլոգիական հասկացություններ են: Հատկապես միջին դպրոցում էկոլոգիական հասկացությունների համակարգը, միջավայրի, նրա գործոնների օրգանիզմների, էկոհամակարգերի, կենսացենոզների, պոպուլյացիաների, տեսակների, սնման շղթաների, դրանց փոխադարձ կապերի և զարգացման օրինաչափությունների վերաբերյալ, ձևավորում և զարգանում են սովորողների էկոլոգիական մտածողությունը, բնապահպանական պահանջմունքները, բնաճանաչողական ընդունակությունները, վարքագծի բարոյախրատական նորմերը, հուզա-կամային որակները: Սրանց թվին են պատկանում պարտքի, պատասխանատվության նորմերը,որոնք արտահայտում են անձի սոցիալական բարոյախրատական վերաբերմունքը, պատասխանատվությունն ու պարտականությունները հասարակության և շրջակա միջավայրի նկատմամբ:

Սովորողների կողմից էկոլոգիական իրավունքի գիտակցումն իր մեջ ներառում էշրջակա միջավայրի մեջ իր վարքագծի ճիշտ դրսևորման, բնության, սոցիալ-տնտեսական, գեղագիտական և հոգևոր արժեքների գիտակցման, բնությունը որպես ազգային հարստություն ընկալելու և նրա օգտագործման ուղղությամբ իր իրավունքների իմացության հարցերը: Իրավական գիտակցություն կձևավորվի միայն այն դեպքում, երբ դպրոցականը քաջատեղյակ լինի պետության կողմից սահմանված իրավական նորմերին, վարքագծի կանոններին և իր իրավունքներին, որոնք առնչվում են պետության շահերին: Տվյալ դեպքում էկոլոգիական իրավունքը դպրոցականի այն վարքագիծն է, որն ընձեռված է նրան բնության հետ հարաբերությունը կարգավորող իրավական նորմով: Էկոլոգիական իրավունքները մտնում են դպրոցականի սոցիալ տնտեսական իրավունքների խմբի մեջ, որը պարունակում է բնության, շրջակա միջավայրի, օգտագործման իրավունքները և պարտականությունները: Դպրոցականի էկոլոգիական գիտակցության ձևավորումն անմիջականորեն առնչվում է իրավական ձևավորման հետ և աճող սերնդի դաստիարակության ընդհանուր նպատակներից մեկն է, որը պետք է դրվի բոլոր ուսումնական առարկաների հիմքում: Էկոլոգիայի մասին այսօր խոսում են շատերը՝ այդ հասկացության տակ հասկանալով մարդու և բնության յուրաքանչյուր փոխազդեցությունը: Էկոլոգիայի տարրերը հայտնաբերվել են դեռևս նախնադարյան մարդու քարանձավային նկարներում, որից դժվար չէ կռահել, որ էկոլոգիան ամենահին գիտություններից է:

Եթե մեր նախնիները կարևորել են, թե որտեղ պետք է փնտրեն ուտելի բույսեր, որսան կենդանիներ, տարբերել դրանց տեսակները, ապա ժամանակակից մարդու

համար այլ է խնդիրը, նա հասկանում է, որ բնության բարիքներից օգտվելու համար, առանց նրան վնասելու, առաջին հերթին հարկավոր է իմանալ, ճանաչել բնաշխարհը և նրա վրա ապրող արարածներին: Անհնար է պահպանել բնությունը, ապահովել բնակության իդեալական միջավայր, էկոլոգիապես գրագետ օգտվել բնությունից՝ չիմանալով, թե այն ի՞նչ է ներկայացնում իրենից, ի՞նչ օրենքներով է գործում և զարգանում, և թե բնության համակարգերի վրա ի՞նչ ծանրաբեռնվածություն կարող է ունենալ հասարկությունը, որպեսզի չավերի, չոչնչացնի դրանք:

Եթե մենք ցանկանում ենք փոփոխել աշխարհը,
ապա նախ պետք փոխենք մարդուն,նրա որակների
և արժեքների համակարգը:

ԳԼՈՒԽ 2. ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Յուրաքանչյուր սերունդ, կամա թե ակամա, դաստիարակվում է շրջակա միջավայրի, բնության պահպանության ու վերարտադրության, բնական հարստությունների արդյունավետ օգտագործման անհրաժեշտության գիտակցությամբ:Հասարակության վերակառուցումը ,նոր տնտեսական հարաբերություններն այսօր իրենց պահանջներն են առաջադրում ժամանակակից դպրոցին,և արդի մանկավարժական նոր խնդիրների թվին ավելանում է դպրոցականների `բնության նկատմամբ պարտքի ու պատասխանատվության զգացման,իրավունքի և վերաբերմունքի ձևավորման ու զարգացման խնդիրը,որոնց լուծումը պայմանավորված է մի շարք օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոններով: Պատմական զարգացման այս փուլում կարևորվում է նաև սոցիալական խնդիրների `որպես սուբյեկտիվ գործոնի դերը:
Անշուշտ,կենդանի բնության կորուստներն ավելի քիչ կլինեին,եթե մարդը լավ ճանաչեր բնությունը և այդ գիտելիքների հիման վրա կազմակերպեր իր գործունեությունը:

Էկոլոգիական մշակույթի վրա հենվող կրթությունն է հենց ձևավորում մարդու ոգեղենության ու բարոյականության հիմքերը: Միայն բարձրակիրթ մարդը, հատկապես` բնության հետ առնչվելիս, կարող է հասկանալ իր արարքի էությունը, գնահատել հետևանքը, անբարենպաստ իրավիճակից ընտրել նվազ կորստով դուրս գալու տարբերակ:

Պատկերավոր ասած՝ էկոլոգիական դաստիարակությունն ու կրթությունը մարդուն մարդկայնացնելու, նրան ինքն իրենից փրկելու, անասնական բնազդներից՝ սպանելու, ավերելու կույր մոլուցքներից ազատագրելու նպատակ է հետապնդում:

Եթե գիտելիքը համոզմունք չի դառնում, ապա դժվար թե գործնականում, կյանքում պահանջվող հատույցով էլ՝ վերարտադրվի՝:

Որքան աշխարհն ավելի է տեխնոլոգիականանում, այնքան կարևորվում են բնության հետ հարաբերվելու մարդկային արժեքները՝ օրինավորությունը, հոգատարությունը և վերջապես՝ պատասխանատվությունը:

Էկոլոգիական խորը գիտելիքները կօգնեն հասարակությանը խուսափելու էկոլոգիական ճգնաժամերից ու աղետներից, որոնց առկայությունը մարդկությունն արդեն գիտակցում է: Միայն էկոլոգիական գիտելիքների հիմքերի վրա հնարավոր կլինի խելամտորեն օգտագործել բնական պաշարները, որոնել և գտնել գյուղատնտեսության ու արդյունաբերության կազմակերպման նոր սկզբունքներ: Վճռորոշ նշանակություն է ձեռք բերել նաև աճող սերնդի բնաճանաչողական, բնապահպանական ընդունակությունների, կարողությունների և հմտությունների ձևավորումը: Դա հնարավորություն կտա հասնել այն բանին, որ դպրոցականներին մտահոգեն ու անհանգստացնեն համամարդկային հիմնահարցերը, նրանց մեջ պատասխանատվության զգացում առաջացնեն շրջակա միջավայրի նկատմամբ և մղեն կոնկրետ գործունեության:

Այսօր մեզ խիստ անհրաժեշտ է վերադառնալ հայ դպրոցի բնապահպանական, բնադաստիարակչական ակունքներին և լրջորեն զբաղվել դպրոցականների էկոլոգիական դաստիարակությամբ, որովհետև մեզ մոտ ավելի, քան մեկ ուրիշ երկրում զգացվում է դրա կարիքը: Այն պետք է սկսել նախադպրոցական տարիքից, դաստիարակել էկոլոգիապես գրագետ ու կրթված քաղաքացիներ:

Էկոլոգիական կրթությունը տարրական կրթության համակարգում կրում է ուսուցողական, հիմնական դպրոցում՝ վերլուծական, իսկ ավագ դպրոցում ՝ պրոբլեմային մակարդակ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

2.1 Էկոլոգիական դաստիարակության առանձնահատկությունները միջին դասարաններում՝ կենսաբանության ուսուցման գործընթացում:

Էկոլոգիական կրթության նպատակը էկոլոգիական դաստիարակությունն է և հասարակության բարեկեցության բարձր մակարդակի ապահովումն ու հասարակության կայուն զարգացման անհրաժեշտությունը:

Էկոլոգիական կրթությունը հնարավոր չէ իրականացնել առանց կենսաբանության իմացության, քանի որ էկոհամակարգային կամ կենսաերկրացենոզային մակարդակը կենդանի օրգանիզմների կազմավորման մակարդակներից մեկն է:

Երեխաներին առաջնորդելով բնության աշխարհ, ծանոթացնելով շրջակա միջավայրի հիմնահարցերին՝ ուսուցիչը կարող է բացահայտել և խթանել յուրաքանչյուր աշակերտի մեջ այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են շիտակությունը, բարությունը, սերը, իմաստությունը, համբերությունը ,կենսասիրությունը, գթասրտությունը, շրջակա միջավայրի հանդեպ

Բնության նկատմամբ մարդու մեջ պատասխանատու վերաբերմունքի դաստիարակումը ընդհանուր կրթության կարևորագույն նպատակն է, իսկ բնության նկատմամբ պատասխանատու վերաբերմունքը՝ անձի բնութագիր:

2.2.Էկոլոգիական կրթության և դաստիարակության կազմակերպումը կենսաբանության ուսուցման գործընթացում

Գարնանը 7-րդ դասարանի աշակերտների հետ կազմակերպեցինք ծառատունկ դպրոցի այգում:Աշակերտներին միացան նաև ծնողները:Նրանց կարգախոսն էր բարեխիղճ վերաբերմունք բնության նկատմամբ:Կազմակերպեցինք դիտումներ փայտից թղթի ստացման,գրքի ստեղծման մասին:Աշխատանքը այգում եղավ շարունակական:Աշակերտները ծանոթացան այգում աճող օգտակար բույսերին,որոնք դեղաբույսեր էին կամ օգտագործվում են սննդի համար:Նրանք մեծ ուրախությամբ մաքրեցին այգին,աղբը տեսակավորեցին,առանձնացրին պոլիէթիլենային պարկերը,շշերը,բույսերի մնացորդները:Հաճախ կազմակերպվել են դասապրոցես դպրոցի այգում:Պարապմունքների ՝դրսում՞ անցկացումը նպատակ է հետապնդում ոչ միայն աշակերտներին ճանաչելի, ըմբռնելի դարձնել միջավայրը, այլև՝ նրանց մեջ մշակել որոշակի գիտակցական վերաբերմունք՝ տեսած արժեքների նկատմամբ: Յուրաքանչյուր աշակերտ ունի իր ծալովի կամ դյուրակիր աթոռակը, ներկապնակը, ինչը հնարավորություն է տալիս նրան՝ առանց հոգնելու, ուրեմն և ուշադրությամբ և հաճույքով լսելու ուսուցչի բացատրությունը այս կամ այն տեղանքի առանձնահատկությունների մասին, տեսնելու, նկարելու, ֆենոլոգիական դիտումներ կատարելու, բուսական, կենդանական աշխարհի,, այլ արժեքների մասին:

Թվում է աթոռակը, նկարելը մանրուք է, բայց դաստիարակչության աշխատանքում մանրուքներ չկան, և այն ամենը, ինչը նպաստում է երեխայի մտահորիզոնի ընդլայնմանը, օգնում է նրան և մանրուք լինել չի կարող:

Էկոկուլտուրայի արմատավորումը կարևորագույն պատվեր է ուսուցչին:

Մի ուրիշ դիտարկում. բոլորիս հայտնի է,որ աշնանը տերևաթափից հետո, ավանդաբար հավաքում և այրում են տերևները, ինչը մեծ վնաս է պատճառում շրջակա միջավայրին ու առողջությանը: Տերևների այրումն աղտոտում է օդը, առաջացնում շնչառական խնդիրներ և երբեմն էլ հրդեհի առաջացման պատճառ դառնում: Աշակերտը գիտի խոնավ տերևների այրման արգասիքների վտանգավոր ազդեցության մասին: Տերևների այրումը օրենքով արգելվում է, սպասվում է պատիժ օրենքը խախտողներին, նախատեսվում է նախազգուշացում կամ տուգանք: Արտադասարանական աշխատանքի ժամանակ աշակերտները ֆերմերներին առաջարկեցին տերևներն այրելու փոխարեն պատրաստել կոմպոստ:Ներկայացվեց կոմպոստի պատրաստման քայլերը,նրա պարունակությունն ու նշանակությունը: Հետաքրքրությունը, աշխատասիրությունը, գործնական քայլերը ներդնելով, զրույցներ և քննարկումներ կազմակերպելով ֆերմերի հետ, պարզվում է, որ ճնշող մեծամասնությունը պատկերացում չունի բերքահավաքից հետո դաշտում մնացած ծղոտի և խոզանի այրման բացասական հետևանքների մասին:

Այրումից հետո մնում է ՝սև անապատ՝, որը ազահորեն կլանելով արևի էներգիան, չորացնում է հողը, առաջանում է օրգանական նյութերի կորուստ: Երբ գրանցում ենք տվյալներ, որ 1 հա-ից գրանցվել է 20 կգ ազոտի, 4 կգ ֆոսֆորի, 5 կգ ծծմբի կորուստ, ինչն առաջացնում է լրացուցիչ ծախսերի անհրաժեշտություն, մյուս կողմից՝ օդ արտանետվող աղտոտիչ նյութերը, որոնք մինչև քաղցկեղի առաջացման պատճառ կարող են դառնալ:

Օրինակները բազմաթիվ ու բազմազան են:

Նպատակային եմ համարում 7-րդ դասարանում աշակերտները պատրաստեն ՝Կարմիր գրքեր՝, գրեն շարադրություն բնապահպանության թեմայի տարբեր վերնագրերով, որոնք կարդան, վերլուծեն և եզրակացություններ անեն 8-րդ դասարանում քննարկեն, վերհանեն առողջությանը վնասող գործոնները, ուսումնասիրեն հիվանդությունները, դրանց առաջացման պատճառները և հետևանքները, 9-րդ դասարանում կազմակերպել պաստառներով ցուցահանդես, դպրոցի տարածքում մաքրության օրեր, տեղադրել աղբամաններ, էքսկուրսիաների ժամանակ մեծ ուշադրություն դարձնել տարածքի մաքրությանը, աշխատանքները նկարել, պատրաստել սահիկաշար, դիտել, վերլուծել կատարած աշխատանքը: Արտադասարանական պարապմունք կատարվեց էքսկուրսիայի ձևով:Էքսկուրսիայի ժամանակ անցկացվող զրույցները,բացի իմացական գիտելիքներից,երեխաների մոտ ձևավորեցին որոշակի վերաբերմունք բույսերի և կենդանիների նկատմամբ:

Ակտիվ վեճերը,բնապահպանական հարցերի շուրջ քննարկումները,հանդիպումներ մասնագետների հետ,բիզնես խաղերը կձևավորեն

էկոլոգիապես հիմնավորված որոշումներ կայացնելու փորձ: Լավագույնս նպաստում է հետազոտական գործունեությունը:Այն յուրահատուկ հնարավորություն է տալիս պասիվ խորհրդածողին վերածել ակտիվ ստեղծագործողի:

Բնության նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի դաստիարակումը հենվում է ոչ թե առանձին առարկայի, հասկացությունների ու գաղափարների վրա, այլ պետք է կրի միջառարկայական բնույթ: Յուրաքանչյուր ուսուցիչ պետք է պատկերացում ունենա ուսումնական ծրագրերի էկոլոգիական պոտենցիալի մասին: Դա առկա է գրականության, ֆիզիկայի, քիմիայի, աշխարհագրության առարկայական ծրագրում, սակայն առավել ընդգրկուն բնույթ է կրում միջին դասարանների կենսաբանության առարկայի բովանդակության մեջ, որտեղ արծարծված էկոլոգիական խնդիրները հանդես են գալիս որպես գիտելիքների հատուկ ձև, սոցիալական նոր իրականություն:

Երեխաները ստացած փաստացի գիտելիքների կուտակման հիման վրա գաղափար են կազմում այն մասին, որ բնությունը միջավայր է և մարդու կյանքի համար անհրաժեշտ պայման: Բնության մեջ նա հանգստանում է, հիանում բնության օրենքների և երևույթների գեղեցկությամբ, զբաղվում սպորտով: Բնությունից ստանում է օդ,ջուր, հարուստ շինանյութ: Բնության մեջ գործող կապերի իմացությունը կարևոր է որպես ճիշտ աշխարհըմբռնում: Սննդային շղթաների բարդ փոխհարաբերությունները, կենդանիների հարմարվելը կոնկրետ բնության միջավայրին և սեզոնային ռիթմերին, մարդու ազդեցությունը բույսերի և կենդանիների վրա հանդիսանում են հետաքրքրություն առաջացնող գործոններ, որոնք ստիպում են աշակերտներին սովորել և ուսումնասիրել բնական փոխհարաբերությունների բնույթը՝ գործնական կյանքում օգտագործելու համար:

Շատ անհրաժեշտ է էկոլոգիական դաստիարակության հայրենասիրական կողմի ապահովումը: Հետևողականորեն պետք է գաղափար տալ այն մասին, որ պահպանել բնությունը,նշանակում է պահպանել հայրենիքը: Հայրենիքի գաղափարը կապված է հայրենի բնության հետ:

Եվ ինչ է տվել ինձ
բնությունը,-
Հավիտյան նորոգ իր հնությունը,
Իր ջրվեժների անքնությունը
Եվ հոգնահոլով իր կրկնությունը...
Իր քարափների համբերությունը,
Իր խղճի առաջ իր գերությունը,
Իր անդունդների տարողությունը,
Սեփական վերքերն ապաքինելու
Կարողությունը... Հ. Սահյան

Հայրենի բնաշխարհի պատկերները, որոնք մանկուց ծանոթ են մարդուն, որոնց մասին նա բանաստեղծություններ է սովորել դեռևս մանկապարտեզում ,ձուլվում

են միմյանց մեջ,և հարազատ երկրի նկատմամբ ունեցած պատասխանատվության զգացմունքը նույնանում է նրա `բնության պահպանության նկատմամբ ունեցած վերաբերմունքի հետ:

Էկոկրթության և դաստիարաության կարևոր հասկացություններից մեկը հետևյալն է՝՝մարդը կենսաբանական էակ է և իր արմատներով կապված է բնության հետ՝:

Աշակերտներին մարդու առողջութան ,հանգստի և աշխատանքի նորմալ պայմաններին ծանոթացնելիս պետք է նշել, որ այս ամենի համար անհրաժեշտ են նպաստավոր բնական պայմաններ, որոնք պետք է պահպանել և լավացնել:

Բնության մեջ գտնվելու ժամանակ ճիշտ վարքագիծ դրսևորելու բարոյական նորմերի դաստարակության հարցը աշակերտների համար բացահայտվում է աստիճանաբար, այն չափով, ինչ չափով որ դա կապված է դասի թեմայի խնդիրների հետ: Աշակերտներին հասկանալի դիտողական օրինակով պետք է հասկացնել, թե բնության մեջ գտնվելու ժամանակ ինչ կարելի է անել և ինչ չի կարելի, այնպես, որ չառաջանան անցանկալի հետևանքներ: Դաստիարակութան արդյունավետությունը պայմանավորված է ուսուցիչների կողմից սովորողների առանձնահատկություններին լավատեղյակ լինելուց:

Դեռահասների բնապահպանական գործունեությունն ունի որոշակի հոգեբանական կառուցվածք, որի հիմնական բաղադրամասերն են՝ բնաճանաչողական դրդապատճառները, էկոլոգիական գիտակցությունը, էկոլոգիական գիտելիքները, դաստիարակչական խնդիրները ,բնաճանաչողական և բնապահպանական գործողությունները, վերահսկողությունը և այլն:

Էկոլոգիական գիտակցության և աշխարհայացքի ձևավորման համար կարևոր նշանակություն ունեն էքսկուրսիաների կազմակերպումը, աշակերտները անմիջական դիտումներ կատարեն բնության մեջ, արդյունաբերական համալիրներում, ուսումնաարտադրական տեղամասում կազմեն աղյուսակներ, սխեմաներ, գրաֆիկներ, ցուցադրվեն ֆիլմեր, սլայդներ և այլն: ՈՒսուցման մեթոդական միջոցների գլխավոր արժեքը և նվաճումը դաստիարակչական արդյունքն է: Ահա թե ինչու պետք է ամբողջ ուսուցման նյութը, բոլոր միջոցները և ձևերը, մեթոդները և հասկացությունների ուսուցումն օգտագործել էկոլոգիական գիտելիքների և ունակությունների, էկոլոգիական կուլտուրա ձևավորելու համար:

Աշակերտների գործունեությունը ինչքան արդյունավետ և ակտիվ լինի, այնքան բարձր կլինի էկոլոգիական գիտակցության ձևավորման դաստիարակչական էֆեկտը, քաղաքացիական պատասխանատվության ձևավորման մակարդակը յուրաքանչյուր մարդու մեջ:

Ըստ ռուս մանկավարժ Վ.Ա. Սոխոմլինսկու՝ դպրոցականի մոտ հոգատար վերաբերմունք դեպի բնությունը կարող է ծագել միայն այն դեպքում, եթե նրա շրջակա միջավայրը բարեկարգի իր աշխատանքով: Այսինքն՝ էկոլոգիական աշխարհայացքի ձևավորումը, որպես հոգեկան երևույթ, անմիջականորեն կապված է սուբյեկտի սոցիալական գործունեության հետ:

Բնությունը կատակներ չի ընդունում: Նա միշտ էլ ճշմարիտ է, միշտ էլ՝ լուրջ, միշտ՝ խիստ, իսկ սխալները և մոլորությունները ծագում են մարդկանցից:

Գյոթե

8-րդ դասարանցիները ակտիվ մասնակցեցին շաբաթօրյակին և ծառատունկին

Եզրակացություն

Կենսաբանության ուսուցման հենց առաջին քայլերից բնության գաղտնիքները բացահայտելով, կենդանի ցանկացած օրգանիզմի նշանակությունն ու դերը բնության մեջ և մարդու կյանքում ուսումնասիրելու միջոցով կարելի է իրականացնել բնության նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ձևավորում և զարգացում, բնապահպանական դաստիարակության իրականացման գործընթաց: Աշակերտները արտադասարանական պարապմունքների,էքսկուրսիաների ժամանակ ձեռք են բերում գիտելիքներ շրջակա միջավայրի, կենսաբազմազանության մասին,գիտակցում են բնապահպան գործունեության անհրաժեշտությունը մեր ժամանակներում:

Էկոլոգիական, բնապահպանական դաստիարակությունը պատասխանատու դաստիարակում է: Այն պետք է անցնի բնաճանաչողությունից դեպի բնասիրություն, ապա՝ բնապահպանություն:

Կենասաբանության ուսուցման և բնապահպանական միջոցառումներ միջոցով ձևավորվում է մարդու վերաբերմունքը բնության, և հենց իր նկատմամբ, օգնում յուրաքանչյուրին հասկանալու բնության մեջ իր տեղն
ու դերը:

Գրականություն

1. Ասատրյան Լ.Թ, Ավանեսյան Լ.Գ. ՝Էկոլոգիական դաստիարակության համակարգը ավագ դպրոցում՞

   ՈԻս. մեթ. ձեռնարկ, Երևան 2003թ.

   https: // aspu.am

2. Հովսեփյան Ա. Մարուխյան Ռ. ՝Անձի էկոլոգիական կուլտուրա՞Արևիկ՞2005 թ. http: // library. asue.am
3. Մարտիրոսյան Գ. ՝Էկոլոգիական դատիարակությունը նախադպրոցական տարիքում՞մեթոդկան ուղեցույց Երևան 2007 թ.
4. Վալեսյան Լ. Ա. և ուրիշներ ՝Բնապահպանության և բնօգտագործման հիմունքներ՞ Երևան 1996 թ.
5. Wikipedia